ԳՐԱԿԱՆ

ՊԱՊՍ

Երկրաշարժից անցել էր մէկ տարի: Փողոցում դղրդոցով անցաւ «տրամ-վայը»: Սեղանին դրուած բաժակների ու ամանեղէնի միջով մի դող անցաւ: Երեխան փաթաթուեց հօրը եւ վախեցած աչուկները յառեց դէպի առաստաղ: Կուչ եկաւ:

– "Դեռ վախը մէջն է".– հայրը հոգոց հանեց եւ իր կրծքին սեղմեց փոքրիկը:

Առաստաղից կախ՝ ծանր տարուբերուում էր ջահը: Ես լցրեցի բաժակները:

– "Հա՛, ի՞նչ էի ուզում պատմել".– Տիգրանը փորձեց մտքերը հաւաքել: Ցիշեց:

– Երկրաշարժից մի քանի տարի առաջ էր: Մերոնց տեսնել ուզեցի:

– "Լցուէք մեքենան".– ասացի:

Երեխաներս իրար անցան:

– "Գի՛ւղ ենք գնալու".– ցատկոտեց փոքրը եւ ոտնաթաթերի վրայ ձգուելով՝ մեքենայի դուռը բացելու փորձեր արեց:

Մի ժամ յետոյ արդէն շնչում էինք գիւղի կարօտած օդը:

Պապս նստած էր թթի ծառի տակ՝ յենուած ձեռնափայտին:

Երեխաներս սկսեցին բզզալ նրա շուրջ:

– Ա՜խ, ինչ անո՛ւշ էք:

– "Ո՞նց ես, պա՛պ".– համբուրեցի ծառի կեղեւ ձեռքը:

– "Է՜հ, բա՛լա ջան, բոստանի փոգած ժամանակն ես եկել".– ժպտաց.– "Էս տարիքիս, էլ ո՞նց պիտի ըլնեմ":

– Զէ՛, լա՛ւ ես, պա՛պ: Դեռ մի էդքան էլ կ'ապրես:

– Տղա՛ ջան, ես իմ ապրածը ապրել եմ: Էսօր-էգուց ճամբորդ եմ: Դո՛ւ ասա, ո՞նց ես:

– "Լաւ եմ, պա՛պ: Լենինականում չորս սենեականոց բնակարան ունեմ, երեք սենեականոց էլ՝ Սպիտակում: Պա՛պ ջան, իմ ունեցածով թոռանս թոռն էլ կ'ապրի".– վերջացրի խօսքս:

Ծերունին հարցական նայեց ինձ:

– Էդ ամէնը լաւ է, բալա՛ ջան, բայց *խոզ* ունե՞ս:

Զհասկացայ պապիս հարցումը: Լռեցի: Նորից կրկնեց.

– *Խո՛զ, խոզ* ունե՞ս:

– Պա՛պ ջան, ի՞նչ հոզ:

– Երբ առտու կը զարթնես, ոտքդ *խոզի* վրա՞յ կը դնես:

– Պա՛պ ջան, դէ՛, կ'արթնանամ, տասնհինգերորդ յարկից վերելակով կամ աստիճաններով կ'իջնեմ փողոց:

Պապս վառեց ծխամորճը: Նայեց ուղի՛ղ աչքերիս:

– Ուրեմն ո՛չ մի բան էլ չունես:

«Խելքը կարծեմ թոցրել է».– մտածեցի:

Վառեցի սիգարետս....

*
* *

Նոյն տարին՝ աշնանը, պապիս հողին յանձնեցինք:

Անցեալ տարի երկրաշարժին երկու բնակարաններս էլ քանդուեցին: Փողերն էլ փոխուեցին: Մնացի անտուն, անտիրական:

Պապիս յիշեցի....

Այս տարի հողատէր դառայ: Հողիս վրայ կանգնած՝ աչքերս երկինք բարձրացրի՝ խեղդելով արցունքներս.

– Պա՛պ, լսո՞ւմ ես, պա՛պ, թոռդ ոտքերի տակ հող ունի: Ամուր կանգնած է իր հողին: Քո ասած *խոզին,* պա՛պ, լսո՞ւմ ես ...:

– Խմե՛նք:

Բաժակները զնգացին:

Դրսում սկսել էր մթնել ...:

ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱՐՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@